ները փոխադրվում էին դեպի Շամախի, որտեղից Կովկասյան շղթայի լեռնանցքով հասնում էին Վոլգայի ավազանն ու Մոսկվա։ Ճանապարհն սկսվում էր Թավրիզից և գալիս Դիզալ գետի հովտով Մեղրի, իսկ Դարաշամբի կիրճով՝ Ագուլիս[5]։ Գորիս ճանապարհների հանգույցում այսօր էլ պահպանվել է հին գյուղի ստորին թաղում քարայրների մեջ եղած քարվանսարան։

XIX դ. առաջին կեսում Գորիսի հետ մրցում էր մելիքական Բռնակոթ գյուղը, որը գտնվում էր մեծ Աղի ճանապարհի այն կետում, որտեղ Սարվարդի (Սալվարդի «Աղոթարանի») լեռնանցքով, այժմյան Սիսիանի (Բիչենաղի) լեռնանցքից ավելի հարավով այդ ճանապարհը Բարձրավան (Մազրա) գյուղի վերևով իջնելով, շեղվում էր ուղղակի արևելք՝ Աղուդի և Վաղուդի գյուղերով մինչև Յայջի։ Սրա մոտակայքում նրան միանում է հարավից եկող ճանապարհը։ Բռնակոթը 1823 թ. ուներ միայն 66 բնակիչ, Գորիսից, որտեղ 119 էր, շատ պակաս, բայց Սիսիանի մահալի մեծագույն գյուղն էր և իր մեջ էր առած մահալի ամբողջ բնակչության 203 ծխի մի երրորդ մասը։ Զուր չէ, որ այս գյուղում նստած Մելիք-Թանգին ռուսական իշխանության հաստատման առաջին տարիներում կառուցել էր Բազարչայի վրա երկու կամուրջներ. վերինը՝ ինչպես Սալվարդի մոտ նրա կառուցած քարվանսարան, պիտի դյուրացներ հաղորդակցությունը Նախիջևանի հետ, իսկ ստորինը՝ Ուռուտ (Վորոտ, Որոտան) գյուղի տակ կառուցածը պիտի կրճատեր ճանապարհը դեպի Տաթև։ Երբ Թուրքմենչայի դաշնագրությամբ սահմանը ետ քաշվեց մինչև Արաքս և հեշտացավ անմիջական կապը Թավրիզի հետ Մեղրու վրայով և Դիզալ գետի հովտով, իսկ Նախիջևանը կորցրեց իր նախկին նշանակությունն իբրև արևելյան ապրանքների պահեստավայր, Աղի ճանապարհով երթևեկությունն էլ սկսեց թուլանալ, իսկ Սիսիանի (Բիչենաղի) լեռնանցքով կառուցվելիք խճուղին ծրագրված էր անցկացնել Բռնակոթից և այժմյան Սիսիանից (Ղարաքիլիսայից-Սիսավանից) ավելի հյուսիսով Եռաբլուրի (Ուշթափալարի) վրայով, ապա որպես գավառապետության կենտրոն նախընտրվեց Գորիս գյուղը, որը և 80-ական թվականներին վերածվեց քաղաքի։

Գորիս քաղաքի համար մշակվեց ճարտարապետական պլան։ Շաբաթական բազարի համար թողին ընդարձակ հողամաս, հրապարակի մնացած մասը բաժանվեց ուղիղ և լայն փողոցներով պլանավորված թաղերի, հիմնվեց մեծ շուկա առևտրական շարքերով, կառուցվեցին պետական, հասարակական և դպրոցական հիմնարկների համար հատուկ շենքեր։ Այսօր էլ Գորիսը Հայաստանի ամենագեղեցիկ քաղաքներից մեկն է։

Քաղաքը արագ մեծանում էր և դառնում էր ոչ միայն գավառի վարչական կենտրոն, այլև կարևոր տնտեսական կենտրոն, որտեղ հավաքվում էին տեղական արտադրանքները ռուսական շուկաներն արտահանելու համար՝ բուր-

---

[5] Այս ուղիով մասնավորապես օգտվել են ագուլեցիք։ Նրանց օժանդակությամբ կառուցվել է Տաթևի ձորում Անապատի վանքը ագուլեցի Մարտիրոսի ձեռքով, իսկ 1676 թ. Ագուլիսից գաղթած կույսերը շինել են Շնեհերի կուսանոցը (հնում՝ Շենհերու կուսանոց անապատ) դաշտեցի (Ներքին Ագուլիս) Վահտիսի Ազարիայի և նրա որդի Բենիամինի ձեռնտվությամբ (Ղ. Ալիշան. Սիսական, էջ 259)։ Այս կուսանոցի պայծառության համար հոգատար է եղել նաև Աբրահամ Կրետացի կաթողիկոսը (գ. ԽԸ, էջ 76) իր Մուղանից Խնձորեսկ-Տաթև-Մեղրի ուղևորության ժամանակ։ Նա անձամբ այցելելով մենաստանը՝ մանր նորոգություններ կատարել է տվել այնտեղ և կարգադրություն է արել վարագույրի, եկեղեցական զգեստների և անոթների մասին, որոնցից մի մասն ընտրել՝ ուղարկել է Տաթևի վանքի ունեցվածքից։